

Հավելված  
ՀՀ կառավարության  
----- թ. -----ի նիստի  
N--- արձանագրային որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**


# ԱՌԱՋԱՏԱՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

*Միավորելով բարձրագույն կրթությունը,  
հետապոստությունները և տեխնոլոգիական  
ձեռներեցությունը*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան	4
2. Անհրաժեշտություն	5
3. Համակարգային լուծում	7
4. Ռազմավարական նպատակներ	9
5. Ամփոփ նկարագիր	11
6. Նախաձեռնություն	13
7. Կրթություն և հետապոստություններ	15
8. Կրթական ռեսուրսներ	17
9. Ուսանողներ	19
10. Ուսանողի կրթական հետադիժ	21
11. Ենթակառուցվածքներ	23
12. Նորարարական միջավայր	25
13. Հիմնում և կառավարում	27
14. Մարդկային ռեսուրսներ	29
15. Ուսանողների ներգրավում	31
16. Հիմնադրման ծախսեր	33
17. Եկամուտների և ծախսերի կառուցվածք	35
18. Ֆինանսական կայունություն	37
19. Ֆինանսավորման կարիք	39
20. Հեռանկար	41
21. Հավելյալ տեղեկություն	42

# 1. ՆԱԽԱԲԱՆ




1.1. Համաշխարհային տնտեսական վարճացումները ցույց են տալիս, որ **գիտությունը և բարձր տեխնոլոգիաները** դառնալու են առաջընթացի հիմնական շարժիչ ուժը:



1.2. Նորարարության, գիտատեխնիկական առաջընթացի հիմքը **կրթված և ստեղծարար մարդկային կապիտալն է:**



1.3. Հայաստանը պետք է դառնա **չորրորդ արդյունաբերական հեղափոխության** մասնակից՝ համաշխարհային մրցունակության դաշտում ունենալով իր ուրույն տեղը:




1.4. Անհրաժեշտ է ձևավորել **բազմաշերտ էկոհամակարգ\***՝ դպրոցական կրթությունից մինչև գիտական հետազոտություններ և արդյունաբերություն:

*Սա է 21-րդ դարում Հայաստանի ոչ գծային աճի բանաձևը*

\* Սույն հայեցակարգի շրջանակում «էկոհամակարգ» եզրույթն օգտագործվում է որպես Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների բազմաշերտ դաշտ՝ դպրոցական կրթությունից մինչև բարձրագույն կրթություն, գիտական հետազոտություններ և արդյունաբերություն: Այն բազմաշերտ համակարգ է, որում Տեխնոլոգիական համալսարանը գործելու է և փոխհարաբերվելու շահառու բոլոր կողմերի հետ:

# 2. ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

- 2.1. Տեսլական և համաշխարհային հավակնություն
- 2.2. Ցանցայնություն և համագործակցություն
- 2.3. Միջապագայնացում
- 2.4. Համաշխարհային առաջատար տեխնոլոգիաների վրա կենտրոնացում
- 2.5. Կիրառական կրթություն և հետապոստություններ
- 2.6. Ձեռներեցության մշակույթ



Հայաստանում Տեխնոլոգիական համալսարանի հիմնման մեծացող կարիքը պայմանավորված է մի խումբ հիմնարար սկզբունքներով:

### **2.1. Տեսլական և համաշխարհային հավակնություն**

Առաջատար տեխնոլոգիական համալսարան Հայաստանում՝ համաշխարհային հավակնություններով: Այն կծառայի որպես գերազանցության հարթակ կրթության, հետազոտության և ձեռնարկատիրության զարգացման համար, որը Հայաստանին կդիրքավորի աշխարհի գիտական և տեխնոլոգիական քարտեզի վրա:

### **2.2. Ցանցայնություն և համագործակցություն**

Տեխնոլոգիական համալսարանը Հայաստանում բարձրագույն տեխնոլոգիական կրթության և հետազոտությունների ոլորտում կզարգացնի տեղական գործընկերների հետ բազմաշերտ համագործակցային ցանցի նոր մոդել՝ խթանելով բաց լինելու մշակույթը:

### **2.3. Միջազգայնացում**

Տեխնոլոգիական համալսարանը բազմակողմանի համագործակցություն կզարգացնի աշխարհի առաջատար տեխնոլոգիական համալսարանների հետ (օրինակ՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի): Համագործակցության ձևաչափերն ընդգրկում են կրթական ծրագրերի և հետազոտական նախագծերի համատեղ իրականացում, ուսանողների և գիտաշխատողների փոխանակման հարթակ և այլն:

### **2.4. Համաշխարհային առաջատար տեխնոլոգիաների վրա կենտրոնացում**

Տեխնոլոգիական համալսարանը կկենտրոնանա համաշխարհային նորարարական կրթական բովանդակության և հետազոտական ուղղությունների վրա, որոնք ներկայումս Հայաստանի բարձրագույն կրթության և հետազոտությունների ոլորտում կամ առկա չեն, կամ գտնվում են զարգացման սաղմնային փուլում:

### **2.5. Կիրառական կրթություն և հետազոտություններ**

Տեխնոլոգիական համալսարանի գործունեության հիմքում ընկած կլինեն կիրառական կրթությունը և գիտական հետազոտությունները: Սա պայմանավորված է երկրի զարգացման գիտելիքահեն տեսլականով և միջազգային տնտեսական միտումներով՝ նկատի առնելով տնտեսության և աշխատաշուկայի արդի կարիքները և կանխատեսվող հեռանկարները:

### **2.6. Ձեռներեցության մշակույթ**

Տեխնոլոգիական համալսարանն իր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջավայրում կզարգացնի ստարտափային ձեռնարկատիրական մշակույթ՝ ուսանողներին և համալսարանի անմիջական մասնակիցներին ուղղակիորեն կապելով տեխնոլոգիական արդյունաբերության և ավելի լայն էկոհամակարգի հետ:



# 3. ՀԱՄԱԿԱՐԳՎՅԻՆ ԼՈՒԾՈՒՄ

## 3.1. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

Հանրակրթության  
հայալեզու և  
միջազգայնորեն մրցունակ  
ծրագիր

## 3.2. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Գիտությունը հանրությանը  
հասանելի դարձնող և  
կրթությունը խթանող  
բարձրակարգ միջավայր

## 3.3. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Բարձրագույն կրթության,  
հետազոտությունների  
և տեխնոլոգիական  
ձեռներեցության  
գերազանցության հարթակ

## 3.4. ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ

Հայաստանի տնտեսական  
վարգացման հիմքը



ա. Մարդկային  
բարձրորակ  
կապիտալ



բ. Համագործակցության  
միջավայր



գ. Համաշխարհային  
բարձր  
տեխնոլոգիաներ

3.5. Հայաստանում գիտության և տեխնոլոգիաների էկոհամակարգի վարգացումը պահանջում է բազմաշերտ և երկարաժամկետ լուծում: Համակարգային լուծման բաղադրիչներ են Հայաստանում Տեխնոլոգիական համալսարանի և Գիտության և տեխնոլոգիաների կենտրոնի հիմնումը և Արարատյան բակալավրիատը: Վերոնշյալ բաղադրիչները փոխկապակցված են ու փոխապդող և կնպաստեն կրթության, գիտության և տեխնոլոգիաների ոլորտում համակարգային առաջընթացին:

3.6. Տեխնոլոգիական համալսարանը Հայաստանում կծառայի իբրև գիտության և տեխնոլոգիաների ժամանակակից բարձրագույն կրթության համար պատրաստի հարթակ:

3.7. Արարատյան բակալավրիատը հանդես կգա որպես Տեխնոլոգիական համալսարանի համար ուսանողների մատակարարման կարևոր աղբյուր:

3.8. Տեխնոլոգիական համալսարանը նախատեսվող Գիտության և տեխնոլոգիաների կենտրոնի համար կապահովի հետազոտությունների ժամանակակից օրակարգ, հետազոտողներ, գիտնականներ և կամավոր ուսանողներ: Իր հերթին՝ Գիտության և տեխնոլոգիաների կենտրոնը Տեխնոլոգիական համալսարանի համար կապահովի գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար լաբորատոր ենթակառուցվածքներ:

3.9. Վերոնշյալ հարթակներում ընթացիկ և նախատեսվող կրթական նախաձեռնություններն ու ձեռքբերումները կխթանեն գիտելիքի ու հմտությունների հանդեպ հետաքրքրությունը և ուսանողների արդյունավետ ընդունելությունը Տեխնոլոգիական համալսարան: Էկոհամակարգի վերոնշյալ բաղադրիչներն ուսանողի և աշխատաշուկայի միջև սահուն ճանապարհ կապահովեն:

3.10. Տեխնոլոգիական համալսարանը և հարակից հարթակները միասին էապես կնպաստեն Հայաստանի գիտության, տեխնոլոգիաների և ձեռներեցության էկոհամակարգի վարգացմանը: Այս գիտելիքահեն ամբողջությունը Հայաստանի տնտեսական վարգացման հիմքն է, որի բաղկացուցիչ մասերն են մարդկային բարձրորակ կապիտալը, բազմաշերտ համագործակցային միջավայրը և արագ վարգացող համաշխարհային բարձր տեխնոլոգիաների արդյունավետ ներդրումը Հայաստանի կրթական ու գիտահետազոտական բնագավառներում և տնտեսության մեջ:



# 4. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ



## 4.1. Նպաստել գիտությունների և տեխնոլոգիաների ոլորտում բարձրագույն կրթության զարգացմանը

ա. Ենթակառուցվածքների ընդարձակում

բ. Ցանցային համագործակցություն և սիներգիայի ստեղծում

գ. Արդի կրթական ծրագրեր և հետապտություններ

## 4.2. Խթանել տեխնոլոգիական արդյունաբերական ճյուղերի աճը

ա. Համագործակցություն՝ գործնական հետապտություններ

բ. Հետապտությունների առևտրայնացում

գ. Ձեռներեցության և նորարարության խթանում

## 4.3. Խթանել գիտությունների և տեխնոլոգիաների հետապտությունները

ա. Ժամանակակից հետապտական ենթակառուցվածքներ

բ. Համագործակցություն

գ. Առաջատար տեխնոլոգիաների ոլորտում հետապտություններ

4.4. Տեխնոլոգիական համալսարանի ռազմավարական նպատակը Հայաստանում գիտության և տեխնոլոգիաների պարզացումն ու տարածումն է: Համալսարանի՝ որպես առկա համակարգի նոր կարևոր օղակի ստեղծումը կնպաստի Հայաստանում գիտության և տեխնոլոգիաների ուղղությամբ բարձրագույն կրթության պարզացմանը: Տեխնոլոգիական համալսարանը տեղական գործընկեր բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ բազմաշերտ գործընկերության և ցանցային մշակույթի միջոցով Հայաստանում կարող է առաջացնել փոխադրեցության արդյունավետ դաշտ: Բարձրագույն կրթության ոլորտի պարզացման համար առարկայական կլինեն Տեխնոլոգիական համալսարանի կողմից և նրա օժանդակությամբ ներդրված միջազգայնորեն մրցունակ կրթական ծրագրերը և ժամանակակից բովանդակությունը:

4.5. Տեխնոլոգիական համալսարանի գործունեության կենսական ուղղություններից մեկը կլինի ոլորտի գիտահետազոտական աշխատանքների առաջընթացը: Այս նպատակով համալսարանն իր տարածքում կստեղծի միջազգայնորեն մրցունակ գիտահետազոտական լաբորատորիաներ և այլ ենթակառուցվածքներ: Տեխնոլոգիական համալսարանը նմանատիպ լաբորատորիաներ կներդնի նաև գործընկեր բուհերում և գիտահետազոտական ինստիտուտներում,

ինչպես նաև կօժանդակի նրանց՝ վերապինելու իրենց գիտահետազոտական ենթակառուցվածքները: Այս համատեքստում Տեխնոլոգիական համալսարանը բազմաշերտ համագործակցություն կհաստատի գործընկեր բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ՝ իրականացնելով համատեղ գիտահետազոտական ծրագրեր ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային մակարդակով (օրինակ՝ միջազգային դրամաշնորհների ֆինանսավորմամբ):

4.6. Տեխնոլոգիական համալսարանը կարևոր դեր կունենա Հայաստանի ներուժին և պարզացման ուղուն լավագույնս համապատասխանող համաշխարհային բեկումնային տեխնոլոգիաները և հետազոտական նորարար ուղղությունները Հայաստանում ներդնելու և պարզացնելու գործում:

4.7. Տեխնոլոգիական համալսարանի գործունեության մյուս կարևոր ուղղությունը կլինի Հայաստանում տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտների պարզացմանը նպաստելը: Սրա խթանման հարթակներ կլինեն մասնավոր հատվածի հետ համագործակցությունը գործնական հետազոտությունների իրականացման մեջ, գիտահետազոտական աշխատանքների արդյունքների առևտրայնացումը և, ընդհանուր առմամբ, տեխնոլոգիական ձեռներեցության և նորարարության խթանումը, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար աջակցող տեխնոլոգիաների զարգացումը:

# 5. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Տեխնոլոգիական համալսարանը կլինի գիտության, հետազոտությունների և ձեռներեցության համագործակցային էկոհամակարգ

## 5.1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ա. Սերտ համագործակցություն **Հայաստանի** բուհերի հետ
- բ. Գործընկերություն **աշխարհի** լավագույն համալսարանների հետ
- գ. Ուսանողները կարող են ստանալ **2 դիպլոմ**

## 5.2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

- ա. Բարձրագույն կրթության **ամբողջական** ցիկլի ապահովում
- բ. Միջազգայնորեն **մրցունակ** կրթական ծրագիր
- գ. **Առցանց** դասընթացներ, **նախագծային** և **փորձարարական** ուսուցում

## 5.3. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

- ա. Տեխ. հանգույցներում **նորարարության** և **ձեռներեցության** խթանում

## 5.4. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

- ա. **Ֆիզիկական, վիրտուալ և սոցիալական** գրավիչ ենթակառուցվածքներ

## 5.5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ա. Ժամանակակից հետազոտական **ենթակառուցվածքներ**
- բ. **Միջմասնագիտական** հետազոտություններ

## 5.6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

- ա. **9 500** ուսանող 10-րդ տարում (ներառյալ օտարերկրյա ուսանողները)

### **5.7. Համապատասխանություն համաշխարհային տեխնոլոգիական հեղափոխությանը**

Տեխնոլոգիական համալսարանը կարտացոլի Հայաստանի դիրքորոշումը համաշխարհային տեխնոլոգիական զարգացումներում՝ համաքայլ ընթանալով գիտական դարաշրջանի գաղափարախոսության և համաշխարհային 4-րդ արդյունաբերական հեղափոխության հետ:

### **5.8. Բազմազանության և ընտրության խթանում**

Տեխնոլոգիական համալսարանի նշանակալից ձեռքբերումներից մեկը կլինի ուսանողի ընտրության ազատությունը: Սրան կնպաստի գործընկեր բուհերի միջև համագործակցությունը և առողջ մրցակցությունը՝ գիտության և տեխնոլոգիաների ժամանակակից և գրավիչ որակյալ կրթություն մատուցելու համար: Ուսանողը կունենա ազատություն՝ ընտրելու տարբեր գործընկերներ բուհերից՝ հիմնվելով տարբեր առաջարկների և դրանց որակի վրա, և համատեղելու ուսումը Տեխնոլոգիական համալսարանում:

### **5.9. Տեխնիկական կրթության մեջ հումանիտար ոլորտների ներգրավում**

Չնայած տեխնոլոգիաների և ճշգրիտ ու բնական գիտությունների վրա կենտրոնացմանը՝ Տեխնոլոգիական համալսարանն իր

կրթական փիլիսոփայության մեջ արդյունավետ կերպով կընդգրկի նաև սոցիալական գիտությունների և հումանիտար ոլորտի հիմնական անհրաժեշտ թեմաները: Սա նպատակաուղղված է ուսանողին համակողմանի բարձրագույն կրթություն տրամադրելուն և անձնային հատկանիշների, արժեքների ու հմտությունների, լեզվամտածողության ու ինքնակազմակերպման զարգացմանը:

### **5.10. Համագործակցություն արդյունաբերության հետ**

Գիտության և տեխնոլոգիաների տեղական և համաշխարհային ոլորտների հետ արդյունավետ փոխհարաբերությունների հաստատում՝ հետազոտությունների առևտրայնացման և համատեղ նախագծերի միջոցով: Համակողմանի կապերի խթանում՝

- ա. արդյունաբերությունը բարձրորակ մարդկային կապիտալով համալրելու միջոցով՝ նպաստելով ոլորտի արտադրողականության բարձրացմանը,
- բ. Հայաստանի տնտեսության նորարարական հատվածների համար բարձրորակ մարդկային ռեսուրսի պատրաստմամբ՝ «կրթելով» և «զարգացնելով» արդյունաբերությունը՝ համաշխարհային բեկումնային զարգացումներին համապատասխան:



# 6. ԵՐԿՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Գիտակրթական առաջատար ծրագրերի միավորում և գործընկերություն

6.1. Տեխնոլոգիական համալսարանը երկրի մակարդակով նախաձեռնություն է:

6.2. Նրա նպատակը տեխնոլոգիական ոլորտի գիտակրթական առաջատար ծրագրերի միավորելն է, համագործակցությունը խթանելը և միջազգային առաջատար հետապոտական համալսարանների հետ թիրախային գործընկերություն պարզացնելը:




ՔԵՆԴԼ ինստիտուտ



Հայ-ռուսական համալսարան



Երևանի պետական համալսարան



Կալիֆոռնիայի տեխնոլոգիական համալսարան



Իլինոյսի համալսարան



Երևանի ֆիզիկայի ինստիտուտ



Հայաստանի ֆիզիկայի ամերիկյան ասոցիացիայի համալսարան



Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարան



Մաթեմատիկայի ինստիտուտ



Հայաստանի ամերիկյան համալսարան



Միջազգային առաջատար այլ տեխնոլոգիական համալսարաններ



Հայաստանյան այլ համալսարաններ և գիտահետապոտական կենտրոններ



Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

6.3. Տեխնոլոգիական համալսարանի հիմնումը երկրի մակարդակով նախաձեռնություն է, որը նպատակաուղղված է Հայաստանը համազգային կրթական կենտրոնի և գիտական ու տեխնոլոգիական հարթակի վերածելու՝ համաշխարհային տեխնոլոգիական զարգացման միտումներին համընթաց:

6.4. Տեխնոլոգիական համալսարանի հիմնումը միտված է Հայաստանում գործընկեր բուհերին և գիտահետազոտական հաստատություններին համախմբելու մի ընդհանուր օրակարգի շուրջ, որի նպատակը ոլորտի արագ զարգացումն ու փոխազդեցության ստեղծումն է:

6.5. Այս համագործակցությունից Տեխնոլոգիական համալսարանի գործընկեր հաստատությունները կշահեն մի շարք ուղղություններով՝

- ա. նոր կրթական բովանդակության հասանելիություն և համատեղ գործածման հնարավորություններ,
- բ. տեղական ուսանողների ավելի մեծ հոսք կրեդիտների փոխճանաչման միջոցով,
- գ. օտարերկրյա ուսանողներ ներգրավելու հնարավորություն և համալսարանի միջազգային ճանաչելիության ընդլայնում,
- դ. սեփական հետազոտական ենթակառուցվածքների

վերազինում և Տեխնոլոգիական համալսարանի լաբորատորիաներից և հետազոտական ենթակառուցվածքներից օգտվելու հասանելիություն, ե. միջազգային հարթակներում համատեղ հետազոտական ծրագրեր իրականացնելու և դրա համար ֆինանսավորում ստանալու հնարավորություն:

6.6. Տեխնոլոգիական համալսարանը, տեղական գործընկերությունից զատ, երկրի մակարդակով կհամագործակցի նաև գիտության և տեխնոլոգիաների ոլորտի համաշխարհային առաջատար համալսարանների հետ (օրինակ՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանի):

6.7. Տեղական և օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը կլինի գործընկերային սկզբունքով և կրեդիտների փոխճանաչման հիման վրա:

6.8. Ընդհանուր առմամբ՝ Տեխնոլոգիական համալսարանի հիմնումը կարտացոլի գիտության և տեխնոլոգիաների՝ երկրի մակարդակով քարոզչությունը և խթանումը:

6.9. Այն կխթանի երիտասարդ սերնդի՝ գիտելիքի և տեխնոլոգիաների մասին իրազեկվածությունը և կօժանդակի մասնագիտության ընտրության հարցում տալով համաշխարհային զարգացումների և տեղական հեռանկարների շուրջ ավելի հստակ պատկերացումներ:



# 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԹԻՐԱԽԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



### 7.1. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԵԿՈՒՄՆԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄ

- ա. ԴԻԶԱՅՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- բ. ԲԻՈՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- գ. ԵՌԱԶԱՓ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ



### 7.2. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ա. ՆԱՆՈՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ
- բ. ԲԻՈՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԳԵՆՈՄԻԿԱ
- գ. ՆԵՅՐՈՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ
- դ. ՎԵՐԱՐՏԱԴՐՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ




### 7.3. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

- ա. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- բ. ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (BEHAVIOR ANALYTICS)



### 7.4. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ա. ԲԼՈԿ-ՇՂԹԱ (BLOCK-CHAIN)
- բ. ԲԻՈՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- գ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻԲԵՈԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ



### 7.5. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄ

- ա. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
- բ. ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄ
- գ. ՈՌԲՈՏԻԿԱ
- դ. ԲՆԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՄՇԱԿՈՒՄ

7.6. Տեխնոլոգիական համալսարանի հիմնական կրթական ուղղությունները և հետազոտական ոլորտները կորոշվեն ըստ մի քանի տեղական և համաշխարհային հենասյունների՝ մի խումբ չափանիշների հիման վրա:

7.7. Տեղական գործոններից են Հայաստանում գիտության տվյալ ոլորտի իրավիճակը և տեղական տնտեսությանն աջակցությունը:

7.8. Հայաստանում գիտության տվյալ ոլորտի իրավիճակը

- ա. մասնագիտացած բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների առկայություն
- բ. միջազգային հրապարակումներ և դեպի դրանք հղումներ
- գ. ուսանողների թիվ և դիսադիկա

**7.9. Տեղական** տնտեսությանն աջակցություն

- ա. տնտեսության ներկայիս և պոտենցիալ ճյուղերը
- բ. ազդեցության հնարավոր ներուժը և դրա մասշտաբը
- գ. տնտեսության ոլորտների հետ համագործակցության մակարդակը

**7.10. Համաշխարհային** գործոններից են բեկումնային տեխնոլոգիաները և առաջատար տեխնոլոգիական համալսարանների լավագույն փորձը:

7.11. Բեկումնային տեխնոլոգիաներ

- ա. արհեստական բանականություն և մեքենայական ուսուցում
- բ. կենսատեխնոլոգիաներ
- գ. ռոբոտիկա
- դ. եռաչափ տպագրություն
- ե. բլոկ-շղթա տեխնոլոգիա
- զ. ամպային տեխնոլոգիաներ և մեծ տվյալներ
- է. իրերի համացանց
- ը. այլ (նանոտեխնոլոգիաներ, քվանտային տեխնոլոգիաներ, այլընտրանքային էներգիա, կանաչ տեխնոլոգիաներ, կիրքեր անվտանգություն և այլն)

7.12. Առաջատար տեխնոլոգիական համալսարանների լավագույն փորձը

- ա. միջճյուղային հետազոտություններ
- բ. արդյունաբերության հետ համագործակցություն
- գ. առցանց ուսուցում
- դ. միջազգայնացում



# 8. ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

## 8.1. ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

ա. Համագործակցություն սահմանված որոշակի ուղղություններով

բ. Կրեդիտների փոխձանաչում

գ. Գիտակրթական ենթակառուցվածքների, գերազանցության կենտրոնների լաբորատորիաների **համատեղ** գործածման հնարավորություն

## 8.2. ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ (MOOCs)

ա. Առցանց դասընթացների պաշտոնական **ինտեգրում** տեխնոլոգիական համալսարանի կրթական մոդելում

բ. Աշխարհի լավագույն կրթական ծրագրերի **հասանելիություն**

գ. Հիմնական միջազգային հեղինակավոր հարթակներ՝ MITx, edX, Stanford Lagunita, Udacity, Coursera և այլն

## 8.3. ՍԵՓԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ա. Համաշխարհային **նորարարական** ուղղությունների ներդրում հայաստանի բարձրագույն կրթության և հետազոտությունների ոլորտում

բ. Կենտրոնացում համաշխարհային **առաջատար տեխնոլոգիաների** վրա

գ. **Միջազգային** գործընկերոջ հետ համագործակցություն

8.4. Տեխնոլոգիական համալսարանը կառաջարկի բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրեր:

8.5. Տեխնոլոգիական համալսարանը կիրականացնի մի քանի տեսակի կրթական ծրագրեր՝

- ա. սեփական ծրագրեր,
- բ. տեղական գործընկեր բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների ծրագրեր,
- գ. միջազգային բաց առցանց ծրագրեր:

8.6. Տեխնոլոգիական համալսարանի սեփական ծրագրերն ուղղված կլինեն գիտության և տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային կրթական և գիտահետազոտական նորարարական բովանդակությունը Հայաստանում ներդնելուն և տարածելուն: Այս համատեքստում Տեխնոլոգիական համալսարանի կենտրոնացումը կլինի համաշխարհային նորարարական և բեկումնային տեխնոլոգիաների վրա, որոնք Հայաստանում դեռևս առկա չեն կամ զարգացման վաղ փուլում են: Տեխնոլոգիական համալսարանն այս ուղղությամբ կհամագործակցի միջազգային հեղինակավոր համալսարանի հետ՝ կրթական ծրագրերն արդյունավետ կերպով մշակելու, ներդնելու և իրականացնելու շուրջ:

8.7. Տեխնոլոգիական համալսարանը, սեփական կրթական ծրագրերից գատ, հավասարակշռված կերպով կմատուցի նաև տեղական և միջազգային կրթական ծրագրեր՝ արդյունավետ կերպով օգտագործելով կրթական ռեսուրսները և նվազագույնի հասցնելով կրկնօրինակումը:

8.8. Տեղական գործընկեր բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ համագործակցության արդյունքում կգործածվեն այն կրթական ծրագրերը, որոնք անհրաժեշտ են Տեխնոլոգիական համալսարանին և որոնք իրենց բովանդակությամբ, մեթոդաբանությամբ և արդիականությամբ համապատասխանում են Տեխնոլոգիական համալսարանի սահմանած որակի նշանողին: Գործընկեր բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների կողմից կրեդիտների փոխճանաչումը, ինչպես նաև գիտահետազոտական ենթակառուցվածքների (լաբորատորիաներ, գերազանցության կենտրոններ, կացարաններ և այլն) համատեղ օգտագործումը կնպաստեն գործընկեր բուհերի կրթական ծրագրերի արդյունավետ գործածմանը:

8.9. Տեխնոլոգիական համալսարանը, միջազգային բարձրագույն կրթության համաշխարհայնացված միտումների համաձայն, իր կրթական բովանդակության և հետազոտությունների մեջ կգործածի նաև համաշխարհային առաջատար մատակարարների զանգվածային բաց առցանց դասընթացներ (MOOCs): Ուսումնական այս մոդելը հասանելի կդարձնի միջազգային ճանաչված առցանց կրթական հարթակները, օրինակ՝ «MITx», «Udacity», «Coursera», «edX», «Stanford Lagunita», և հնարավորություն կտա օգտվելու ժամանակակից առաջնակարգ գիտատեխնոլոգիական բովանդակությունից:



# 9. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Տեխնոլոգիական համալսարանը կներգրավի և կկարգացնի տեղացի և օտարերկրյա ուսանողների տաղանդները

## ՏԵՂԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

- 9.1. Գիտություններ և տեխնոլոգիաներ սովորող ուսանողների լավագույն ~15-20%-ը
- 9.2. Տրամադրվող միջազգայնորեն մրցունակ կրթության միջոցով

- ա. ՊՈՏԵՆՑԻԱԼ ՏԱՂԱՆԴԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ԶԱՐԳԱՑՈՒՄ և ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԴԵՊԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ,
- բ. ՈՒՂԵՂՆԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԻ ՆԿԱԶԵՑՈՒՄ,
- գ. ԱՊԱԳԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԲԱՐՁՐՈՐԱԿ ՄԻՋՈՒԿԻ ԿԱԶՄՈՒՄ

## ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

- 9.3. Միջազգային տաղանդի ներգրավում
- 9.4. Օտարերկրյա և սփյուռքահայ ուսանողներ
- 9.5. Թիրախ

- ա. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԳՏՈՂ ՈՐԱԿՅԱԼ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ

9.6. Տեխնոլոգիական համալսարանի ուսանողական համակազմը բաղկացած կլինի և տեղական, և օտարերկրյա ուսանողներից:

9.7. Տեխնոլոգիական համալսարանը կլինի համապարփակ հարթակ, որը գիտության և տեխնոլոգիաների բնագավառում կներգրավի, կմիավորի և կզարգացնի տեղական ուսանողության լավագույն միջուկը՝ 15-20%-ը: Բարձրակարգ տեխնոլոգիական համալսարանի ամկայությունը և տրամադրվող միջազգայնորեն մրցունակ կրթությունը կնպաստեն տաղանդավոր երիտասարդներին դեպի գիտությունների և տեխնոլոգիաների ոլորտ ուղղորդելուն, դրանում նրանց ներգրավմանն ու զարգացմանը: Սա կիրականացվի բարենպաստ պայմանների ստեղծման և կրթական ու հետազոտական աշխատանքների համար ֆիզիկական, սոցիալական և վիրտուալ անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման միջոցով: Տաղանդի զարգացումը և զուգահեռաբար գիտությունների և տեխնոլոգիաների արդյունաբերության առաջխաղացումը կխթանեն հայրենիքում մնալու և աշխատելու գրավչությունը և կնվազեցնեն ուղեղների արտահոսքը երկրից:

9.8. Տեխնոլոգիական համալսարանի բնականոն զարգացման համար առարկայական կլինի նաև օտարերկրյա ուսանողների ներգրավումը, որը կօգնի համալսարանի միջազգայնացմանը, ինչպես նաև կապահովի միջազգային տաղանդի ներգրավումը: Նախատեսվում է, որ Տեխնոլոգիական համալսարանը կներգրավի օտարերկրյա ուսանողներ հարևան երկրներից (Իրան, Վրաստան), տարածաշրջանից (Մերձավոր Արևելքի երկրներ, Ռուսաստան՝ մասնավորապես հարավային շրջաններ), ԵԱՏՄ-ից և այլ երկրներից (օրինակ՝ Հնդկաստան): Օտարերկրյա ուսանողների կազմում կլինեն ինչպես սփյուռքահայեր, այնպես էլ օտարազգիներ:


9.9. Օտարերկրյա ուսանողների դեպքում թիրախը կլինեն գիտություն և տեխնոլոգիաներ ուսումնասիրող ուսանողների լավագույն միջուկը և հետազոտողներ ու գիտնականներ, որոնք ձգտում են ոլորտում ստանալու բարձրորակ կրթություն և բարձրակարգ հետազոտական աշխատանքներ կատարելու հնարավորություն:



# 10 . ՈՒՍԱՆՈՂԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԵՏԱԳԻԾ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՐԾԸՆԿԵՐԲՈՒՂ



**ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՓՈԽՃԱՆԱԶՈՒՄ**

Կրեդիտները, որոնք ուսանողը ստանում է անցնելով կուրսեր, որոնք առկա են համալսարաններից միայն մեկում, փոխձանաչվում են և գրանցվում ուսանողի հաշվին Նաև մյուս համալսարանում:

**2 ԴԻՊԼՈՄ**

Շրջանավարտները կարող են ստանալ 2 բուհի դիպլոմ

10.1. Տեխնոլոգիական համալսարանի գործունեությունը կապահովի գիտության և տեխնոլոգիաների ոլորտի բարձրագույն կրթության ամբողջական պարբերաշրջանը:

10.2. Ուսումնառության ընթացքում ուսանողը կանցնի Տեխնոլոգիական համալսարանի սեփական կրթական ծրագրերը և գործընկեր բուհերի ու գիտահետազոտական ինստիտուտների դասընթացները: Սա հնարավոր կլինի կրեդիտների փոխճանաչման միջոցով: Ուսումնառության ընթացքում ուսանողի համար հասանելի կլինեն նաև ինչպես Տեխնոլոգիական համալսարանի, այնպես էլ գործընկեր բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների լաբորատորիաներն ու գիտահետազոտական այլ ենթակառուցվածքներ: Ի լրումն՝ Տեխնոլոգիական համալսարանում ուսումնառության կարևոր մաս կկազմեն միջազգային բաց առցանց ուսումնական ծրագրերը:

10.3. Տեխնոլոգիական համալսարանում ուսումնառության բաղադրիչ կլինեն միջառարկայական կրթական բովանդակությունը և նախագծային ուսումնառությունը:

10.4. Տեխնոլոգիական համալսարանի շրջանավարտը կարող է ստանալ երկու դիպլոմ՝ Տեխնոլոգիական համալսարանի և գործընկեր բուհի կամ գիտահետազոտական ինստիտուտի: Ե՛վ ուսանողի, և՛ գործընկեր հաստատության համար պայմանները նախապես սահմանված կլինեն:

10.5. Օտարերկրյա ուսանողների համար ուսուցումը կլինի անգլերեն լեզվով:

# ՆԷՏՈՒԳԻՊ

# 11.

## ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒԾՎԱԾՔՆԵՐ

Սեփական տարածք (campus) +  
ցրված ենթակառուցվածքներ

Նոր մոդելի ինտերակտիվ  
կրթական միջավայր



### 11.1. ՖԻԶԻԿԱԿԱՆ

ա. Ցանցայնության սկզբունք

բ. Սեփական տարածք

գ. Որոշ  
ենթակառուցվածքների  
տեղակայում գործընկեր  
բուհերում

դ. Լաբորատորիաներ

ե. Բազմաֆունկցիոնալ  
լսարաններ

զ. Անհատական և թիմային  
աշխատանքների  
տարածքներ

է. Բաց բազմաֆունկցիոնալ  
տարածքներ

ը. Սրճարաններ

թ. Կացարաններ

ժ. Այլ



### 11.2. ՎԻՐՏՈՒԱԼ

ա. Առցանց ուսուցում

բ. Զանգվածային բաց առցանց  
դասընթացներ (MOOCs)



### 11.3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ա. Փորձարարական ուսում նառություն

բ. Հատուկ նախատեսված  
սոցիալական միջավայրերում ոչ  
ֆորմալ ուսում նառություն

գ. Խմբային նախագծեր և  
քննարկում ներ

դ. Վարպետության դասեր

ե. Մենթորինգ

11.4. Տեխնոլոգիական համալսարանը կունենա սեփական շենքը, ինչպես նաև ցրված ենթակառուցվածքներ թե սեփական տարածքում, թե գործընկեր բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ:

11.5. Սա կարտացոլի համալսարանի որդեգրած նոր մոդելի՝ փոխգործուն կրթական միջավայր ստեղծելու և զարգացնելու մշակույթը: Սրա կարևոր բաղադրիչները կլինեն Տեխնոլոգիական համալսարանի ֆիզիկական, վիրտուալ և սոցիալական միջավայրերն ու համապատասխան ենթակառուցվածքները:

### **11.6. Ֆիզիկական միջավայր**

ա. Ֆիզիկական միջավայրի ստեղծման հիմքում ընկած կլինի ցանցայնության սկզբունքը՝ ենթակառուցվածքներ ինչպես սեփական տարածքում, այնպես էլ գործընկեր հաստատությունների հետ համատեղ: Օրինակ՝ նախատեսվում է, որ Տեխնոլոգիական համալսարանը մի շարք լաբորատորիաներ կհիմնի գործընկեր բուհերում և գիտահետազոտական ինստիտուտներում՝ ըստ մասնագիտացման:

բ. Տեխնոլոգիական համալսարանի ֆիզիկական ենթակառուցվածքի կարևոր բաղադրիչներ կլինեն գիտահետազոտական լաբորատորիաները և ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով զինված բազմագործառական լսարանները:

գ. Արդի համաշխարհային լավագույն փորձին համապատասխան՝ Տեխնոլոգիական համալսարանը, ավանդական լսարաններից և լաբորատորիաներից զատ, կունենա նաև նորարարական

ոճով ստեղծված տարածքներ անհատական և թիմային աշխատանքների համար՝ կրթական և գիտահետազոտական նպատակներով. բազմագործառական տարածքներ, ֆաբլաբեր, սրճարաններ, քննարկումների սրահներ և այլն:

### **11.7. Վիրտուալ միջավայր**

Տեխնոլոգիական համալսարանը կստեղծի ժամանակակից միջավայր՝ բարձրակարգ առցանց ուսուցում ապահովելու նպատակով: Սա կիրականացվի ինչպես սեփական առցանց դասընթացների, այնպես էլ համաշխարհային առաջատար բուհերի միջազգային բաց առցանց դասընթացների միջոցով: Այս նպատակով Տեխնոլոգիական համալսարանը կունենա բարձրակարգ էլեկտրոնային-տեխնոլոգիական հարթակներ:

### **11.8. Սոցիալական միջավայր**

Առցանց ուսուցումից զատ, միջազգային միտումների համաձայն, Տեխնոլոգիական համալսարանի որդեգրած կրթական քաղաքականության կարևոր բաղադրիչ կլինի ուսանողների համար լայնաշերտ սոցիալական փորձառություն ապահովելը: Սրա իրականացման գործիքակազմը ներառում է փորձարարական ուսուցումը և նախագծային ուսումնառությունը, հատուկ ստեղծված ֆիզիկական և վիրտուալ միջավայրերում իրականացվող ոչ պաշտոնական ուսումնառությունը, խմբային նախագծերը, պարբերաբար տեղի ունեցող վարպետության դասերը: Ի լրումն՝ Տեխնոլոգիական համալսարանը կներդնի և կզարգացնի մենտորության բարձրակարգ և արդյունավետ մշակույթ:





ՍՈՑԻԱԼԻԶԱՅԻԱ

12.

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ  
ՄԻՋԱՎԱՅՐ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՁԵՌՆԵՐԵՅՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՎԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ


ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ԲԱԶՄԱՖՈՒՆԿՅՈՒՆԱԼ  
ԼՍԱՐԱՆՆԵՐ

ՖԱԿԼԱԲ

ՍՐՃԱՐԱՆՆԵՐ

ԲԻԶՆԵՍ  
ԻՆԿՈՒԲԱՏՈՐ



ԲԱՑ  
ԲԱԶՄԱՖՈՒՆԿՅՈՒՆԱԼ  
ՏԱՐԱԾՔՆԵՐ

ԲԱԶՄԱՖՈՒՆԿՅՈՒՆԱԼ  
ԼՍԱՐԱՆՆԵՐ

ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ  
ՈՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՑՈՒՑԱՍՐԱՀՆԵՐ

12.1. Տեխնոլոգիական համալսարանի գաղափարախոսությունը նորարարական միջավայրի զարգացումն է: Սրա հենասյուններն են կրթությունը, գիտահետազոտությունները և համագործակցությունը, սոցիալացումը և ձեռներեցությունը:

12.2. Տեխնոլոգիական համալսարանի գործունեության առանցքային ուղղություններից մեկը կլինի բարձրակարգ գիտահետազոտական աշխատանքների իրականացումը: Իր բարձրորակ մարդկային ռեսուրսի և ժամանակակից լաբորատոր ենթակառուցվածքների շնորհիվ Տեխնոլոգիական համալսարանը կդառնա հետազոտությունների իրականացման և գիտելիքի ձևավորման միջուկ՝ ներգրավելով և զարգացնելով տեղական և միջազգային հետազոտական տաղանդ: Հետազոտությունների իրականացման սկզբունքներից կլինեն հետազոտությունների միջառարկայական բնույթը՝ ինտեգրված նախագծերի միջոցով, գործընկեր բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ համագործակցությունը: Հետազոտությունների արդյունավետությունը կապահովվի արդյունաբերության կարիքների վերաբերյալ տեղեկացվածության, ինչպես նաև արդյունաբերությունը գրագետ ուղղորդելու միջոցով:

12.3. Տեխնոլոգիական համալսարանը Հայաստանի տեխնոլոգիական արդյունաբերության հետ կզարգացնի փոխշահավետ համագործակցություն՝ խթանելով երկրում տեխնոլոգիական ձեռներեցությունը:

12.4. Համալսարանում կգործի բիզնես ինկուբատոր, որը համալսարանի ուսանողների, հետազոտողների, գիտնականների համար կապահովի ստարտափային և հետազոտությունների արդյունքների շուկայահանման և առևտրայնացման համար սնուցող միջավայր:

# 13.

## ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

13.1. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ  
ԿՀԻՄՆՎԻ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ  
ԿՈՂՄԻՑ ՈՐՊԵՍ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ ՀԻՄՆԱԴՐԱՄ, ԵՎ  
ԿԿԱՌԱՎԱՐՎԻ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԵՎ  
ՀԱՄԸՆԴԳՐԿՈՒՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
ՄԻՋՈՑՈՎ

ՀԻՄՆԱԴՐՆԵՐ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐ

- 
- + ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
  - + ԳՈՐԾԸՆԿԵՐ ԲՈՒՎԵՐ և ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ
  - + ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ և ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- 
- + ՏԵՂԱԿԱՆ ԲԻՋՆԵՍ ՈԼՈՐՏ
  - + ԳԼՈԲԱԼ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏ

13.2. Հոգաբարձուների խորհրդին կից կգործեն խորհրդատվական մարմին և կրթական ու այլ ուղղություններով հանձնաժողովներ, մասնավորապես՝

- ա. գործադիր,
- բ. ուսանողների ընդունելության,
- գ. զարգացման,
- դ. ներդրումների,
- ե. աուդիտի:

13.3. Հոգաբարձուների խորհուրդը և կից մարմինները պատասխանատու կլինեն Տեխնոլոգիական համալսարանի կանոնադրական նպատակների իրականացման համար, մասնավորապես՝

- ա. համալսարանի զարգացման ռազմավարական ուղղությունների,
- բ. բյուջեի հաստատման և վերահսկման,
- գ. կրթական ծրագրերի և աստիճանների հաստատման,
- դ. հոգաբարձուների խորհրդի անդամների և համալսարանի նախագահի (պրոռեկտորի) ընտրության:

13.4. Համալսարանը կղեկավարվի նախագահի (ռեկտորի) կողմից: Կլինեն պրոռեկտորների հաստիքներ հետևյալ ուղղություններով՝

- ա. կրթական,
- բ. գիտահետազոտական,
- գ. գործառնական,
- դ. համագործակցության և զարգացման:

# ՄԱՐԴԿԱՅԻՆ 14. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՏԵՂԱՑԻ ԵՎ ԱՐՏԵՐԿՐԻՑ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՐՁՐՈՐԱԿ ՌԵՍՈՒՐՍ

## 14.1. Հայազգի միջազգային գիտնականներ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

## 14.2. Օտարերկրյա գիտնականներ

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

## 14.3. Հայաստանում գործող գիտնականներ

ՏԵՂԱՑԻ ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ

## 14.4. Աշխարհի առաջատար բուհերի շրջանավարտներ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ա ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

14.5. 10 ՏԱՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ~200 ԴԱՍԱԽՈՍ (ՆԵՐԱՌՅԱԼ ~10% ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ):

14.6. ՀՐԱՎԻՐՅԱԼ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻՑ:

14.7. ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՄՐՅՈՒՆԱԿ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻՋԻՆՈՒՄ ~\$6,000 (ՀԱՄԱԽԱՌՆ), ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ:

14.8. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ ՀԵՆՑ ՍԿԶԲՈՒՄ ~\$30,000-Ի ՉԱՓՈՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ՈՐԸ ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (Ի ՀԱՎԵԼՈՒՄՆ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱԿԱՆՈՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ):

14.9. Տեխնոլոգիական համալսարանում կրթական և գիտահետազոտական աշխատանքի համար գիտնականների ներգրավման նպատակով կգործածվեն առկա համապատասխան տվյալների շտեմարանները (օրինակ՝ FAST հիմնադրամի, Գիտության պետական կոմիտեի և այլն):  
Համալսարանի խոստումնալից շրջանավարտների համար կստեղծվեն գրավիչ պայմաններ համալսարանում դասախոսական կամ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավման համար:

14.10. Տեխնոլոգիական համալսարանը կրթական և գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված մասնավորապես երիտասարդ գիտնականների համար կիրականացնի մասնագիտական զարգացման և խթանման ռազմավարություն:


14.11. Հրավիրյալ պրոֆեսորադասախոսական կազմի համար կապահովվեն ինտեգրման համար անհրաժեշտ պայմանները՝ դասախոսական աշխատանքի, գիտական հետազոտությունների, միջազգային հարթակներում գործընկերության ու համատեղ ծրագրերին մասնակցելու և մասնագիտական զարգացման մրցունակ ծրագրերի իրականացման նպատակով:

# 15. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

15.1. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է, ՈՐ 7-րդ ՏԱՐՎԱՆԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԿՆԵՐԳՐԱՎԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՍԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ~ 15%-ԻՆ:


15.2. ՆՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ՈՒՆԻ ՄԻՆՁԱ 50% ԱՃԻ ՆԵՐՈՒԺ՝

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎ**  
ՄԱՐԴ, ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ




- ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ
- ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

**ՏԵՂԱՅԻ ԵՎ ՕՏԱՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ**  
%, ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ



■ ՏԵՂԱՅԻ ■ ՕՏԱՐ

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ**  
ՄԱՐԴ, ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ



15.3. Կանխատեսվում է, որ Տեխնոլոգիական համալսարանի գործունեության առաջին 5 տարիների ընթացքում ուսանողական համակազմը կգերազանցի 5000-ը, իսկ մեկ տասնամյակի ընթացքում կհասնի շուրջ 10 000-ի: Այս ժամանակահատվածում Հայաստանի բնական գիտությունների և տեխնոլոգիաների ոլորտների ուսանողության թիվը կարող է մինչև կիսով չափ աճել: Սա պայմանավորող հանգամանքներից է աշխարհում վերոնշյալ ոլորտների կարևորության և գրավչության աճը, որն արտացոլվում է Հայաստանի տնտեսության և զարգացման հեռանկարներում և գնալով ավելի է տարածվելու:

15.4. Մյուս նշանակալից հանգամանքը կլինի Հայաստանում գործող միջազգայնորեն մրցունակ Տեխնոլոգիական համալսարանի առկայությունը, որը կարող է լրացնել տեղական և համաշխարհային աճող պահանջարկը, իրացնել ուսանողների նպատակները և աշխատաշուկայի հետ արդյունավետ կապող օղակ դառնալ: Համապատասխան ոլորտներում ուսանողների թվի վերոնշյալ աճի ներուժի պայմաններում Տեխնոլոգիական համալսարանը կարող է ներգրավել ոլորտի ուսանողների շուրջ 15%-ին:

15.5. Կանխատեսվում է, որ օտարերկրյա ուսանողների թիվը և տեսակարար կշիռը աստիճանաբար կաճեն: Նախատեսվում է, որ սկզբնական շրջանում, օրինակ՝ գործունեության երրորդ տարում, օտարերկրյա ուսանողների թիվը կկազմի ուսանողական ընդհանուր համակազմի մոտ մեկ երրորդը, 6-րդ տարում տեղական և օտարերկրյա ուսանողների թիվը կհավասարվի, իսկ արդեն 10-րդ տարում օտարերկրյա ուսանողների թիվը, ունենալով տեղականին գերազանցելու ներուժ, կարող է հասնել 60%-ի: Օտարերկրյա ուսանողների թվի աճի առաջանցիկ տեմպը (տեղական ուսանողների համեմատ) պայմանավորված կլինի միջազգային բարձրագույն կրթության ոլորտում ուսանողների շարժունակության շարունակական զարգացմամբ, որն այսօր ունի աճի նկատելի միտում, աշխարհում գիտության և տեխնոլոգիաների ոլորտի կարևորության ու գրավչության աճով և Տեխնոլոգիական համալսարանի զարգացմամբ ու համապատասխանաբար նրա վերաբերյալ միջազգային իրազեկվածության աճով:





# 16. ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ

# ՀԻՍՆԱԳԻՐՍ

## ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

16.1. ԳԼԽԱՎՈՐ ՇԵՆՔԻ ԵՎ  
ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

~ \$ 14 000 000

~14 հապ. քմ

16.2. ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ԵՎ  
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

~ \$ 4 200 000

16.3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ  
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ,  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

~ \$ 4 000 000

Այդ թվում՝  
օժանդակություն  
գործընկեր բուհերի  
վերապահմանը

16.4. ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ  
ԾՐԱԳՐԵՐ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

~ \$ 1 800 000

16.5. ՊՐՈՅԵԿՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

~ \$ 1 000 000

## ԸՆԴԱՄԵՆԸ

~ \$25 000 000

16.6. Նախատեսվում է, որ Տեխնոլոգիական համալսարանի հիմնման ծախսերի կեսից ավելին՝ շուրջ 14 մլն ԱՄՆ դոլարը, կկազմեն համալսարանի գլխամասի և մասնաշենքերի կառուցման ծախսերը: Ընդհանուր առմամբ՝ նախատեսվում է, որ համալսարանը կգբաղեցնի մոտ 14 000 քմ տարածք:

16.7. Համապատասխանաբար մոտ 17% և 16% կկազմեն կահավորման ու սարքավորումների և ենթակառուցվածքների, լաբորատորիաների ու հետազոտությունների մեկնարկային ծախսերը: Հարկ է նշել, որ այս ծախսերի մի մասը ներառում է նաև գործընկեր բուհերին և գիտահետազոտական ինստիտուտներին Տեխնոլոգիական համալսարանի կողմից տրամադրվող աջակցությունը՝ մասնավորապես լաբորատորիաների և այլ գիտահետազոտական ենթակառուցվածքների ներդրման/վերազինման համատեքստում:


16.8. Նախատեսվում է, որ մոտ 1,8 մլն ԱՄՆ դոլար (հիմնման ընդհանուր ծախսերի մոտ 7%) կկազմի կրթական ռեսուրսների, ծրագրերի և տեխնոլոգիաների ձեռքբերումը: Սրանք կներառեն դասագրքեր, մասնագիտական գրականություն, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ, էլեկտրոնային ռեսուրսներ, լիցենզիաներ, անդամակցություն միջազգային մասնագիտական էլ. գրադարանների ու տեղեկատվական շտեմարանների և այլն:

16.9. Տեխնոլոգիական համալսարանի հիմնադրման համար չի ենթադրվում անմիջական պետական ֆինանսական ներդրում: Համալսարանի հիմնման ծախսերի ֆինանսավորման աղբյուրներն են ինստիտուցիոնալ և անհատական ներդրումները:

# ԾԱԽՍԵՐ

# 17. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ

## 17.1. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, % ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ




Ուս. վարձ

Այլ\*

\* Գիտահետազոտական արդյունքների առևտրայնացում, դրամաշնորհներ և նվիրատվություններ, այլ

## 17.2. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ, % ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ



Աշխատավարձեր

Ընդհանուր, վարչական և այլ

Զարգացման ծախսեր

17.3. Տեխնոլոգիական համալսարանի եկամտի աղբյուրները կկազմեն ուսանողների ուսման վարձավճարները, գիտահետազոտական արդյունքների առևտրայնացումը, դրամաշնորհները, նվիրատվությունը և այլն:

17.4. Տեխնոլոգիական համալսարանում 60 ակադեմիական կրեդիտի համար նախատեսված է վարձավճարի հետևյալ չափը՝

- ա. ՀՀ քաղաքացիների համար՝ 4000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ
- բ. Օտարերկրյա քաղաքացիների համար՝ 7000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

17.5. Վարձավճարի մակարդակը արտացոլում է տրամադրված կրթության արժեքը՝ միջազգային չափանիշներին համապատասխան, մասնավորապես՝ տարածաշրջանից օտարերկրյա ուսանողներ ներգրավելու տեսանկյունից՝ հանդիսանալով վարձավճարի մրցունակ չափ:

17.6. Տեղական և օտարազգի ուսանողների համար կգործեն կրթաթոշակային ծրագրեր, որոնք ամբողջապես և մասնակիորեն կփոխհատուցեն ուսման վարձավճարները: Նախատեսվում է, որ տեղական ուսանողների շուրջ 70%-ը կստանա կրթաթոշակ: Ավելի փոքրածավալ կրթաթոշակային ծրագրեր կգործեն նաև օտարերկրյա ուսանողների համար:

17.7. Նախատեսվում է, որ Տեխնոլոգիական համալսարանի եկամուտների կառուցվածքում աստիճանաբար կաճի, ուսման վարձավճարներից զատ, եկամտի նաև մյուս աղբյուրների (գիտահետազոտական արդյունքների առևտրայնացում, դրամաշնորհներ, նվիրատվություն և այլն) տեսակարար կշիռը: Սրանց մասնաբաժինը գործունեության սկզբնական շրջանում մեկ տասնամյակի ընթացքում, 20%-ից կարող է հասնել մինչև 30%-ի:

17.8. Տեխնոլոգիական համալսարանի ծախսային ուղղություններն են աշխատավարձերը, զարգացման ծախսերը, ընդհանուր/վարչական ծախսերը և այլն (օրինակ՝ առաջմղում, շենքի և ենթակառուցվածքների պահպանման ծախսեր և ամորտիզացիա):

17.9. Տեխնոլոգիական համալսարանի գործունեության ծախսային կառուցվածքում հիմնական ծախսային ուղղությունը կլինի պրոֆեսորադասախոսական և գիտահետազոտական աշխատակազմի վարձատրությունը: Նախատեսվում է, որ համալսարանի զարգացմանը զուգընթաց կմեծանա զարգացմանն ուղղված ծրագրերի (գիտահետազոտական նախագծերի) թիվը: Համապատասխանաբար, զարգացման ծախսերի մասնաբաժինը մեկ տասնամյակի ընթացքում, ըստ կանխատեսման, մոտ 10%-ից կհասնի 35%-ի: Մյուս կողմից՝ կնվազեն աշխատավարձային և ընդհանուր/վարչական/այլ ծախսերը՝ համապատասխանաբար 70%-ից 50% և 20%-ից 15%:

# 18. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՏԱԿԱԿՅԻՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

18.1. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՍՏԵՂԾԵԼ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ (ENDOWMENT FUND):


18.2. Տեխնոլոգիական համալսարանի գործառնական բյուջեն 10-րդ տարում մոտարկվում է \$40 մլն:

18.3. Կանխատեսվում է, որ գործունեության առաջին 5 տարիների ընթացքում գործառնական դեֆիցիտը կաճի, այնուհետև աստիճանաբար կնվազի. դեֆիցիտն 1-ին տարում՝ ~\$2.4 մլն, 10-րդ տարում՝ ~\$0.9 մլն:

18.4. Նպատակային դրամագլխից ստացված եկամուտը հիմնականում կօգտագործվի ֆինանսավորելու հետևյալը՝

- ա. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԵՖԻՑԻՏ
- բ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ (ՆԱԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ)
- գ. ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ (ՏԵՂԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ~70%-Ի ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ)

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ  
ՄԼՆ ԱՄՆ ԴՈՒԱՐ, ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ



- ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
- ԵԿԱՄՈՒՏ
- ԾԱԽՍԵՐ

18.5. Կանխատեսվում է, որ, Տեխնոլոգիական համալսարանի գործունեությանը և զարգացմանը զուգընթաց, համալսարանի բյուջեն կաճի և 10-րդ տարում կհասնի շուրջ 40 մլն ԱՄՆ դոլարի: Գիտության և տեխնոլոգիաների միջազգային առաջատար բուհերի փորձը ցույց է տալիս, որ բուհերի ֆինանսական ինքնաբավության ապահովման նպատակով կիրառվում է թիրախային հատուկ գործիքակազմ, որն անհրաժեշտ է բուհի եկամուտներին զուգահեռ: Ամենատարածված հարթակը նպատակային դրամագլուխն է (Endowment Fund), որը ներդրված անձեռնմխելի գումար է և որից ստացված եկամուտով ֆինանսավորվում է բուհերի ծախսային ճեղքվածքը: Օրինակ՝ Ստենֆորդի համալսարանի նպատակային դրամագլուխը կազմում է 22,4 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ Փրինստոնի համալսարանինն ու Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտինը՝ համապատասխանաբար 21,7 և 13,2 մլրդ ԱՄՆ դոլար:

18.6. Կանխատեսվում է, որ Տեխնոլոգիական համալսարանի գործունեությանը և կայացմանը զուգընթաց կկրճատվի համալսարանի ծախսային ճեղքվածքը: Առաջին 5 տարիների ընթացքում տարեկան միջին կարիքը մոտարկվում է շուրջ 3,6 մլն ԱՄՆ դոլար, իսկ հաջորդող 5 տարիների ընթացքում՝ 2,3 մլն ԱՄՆ դոլար: 10-րդ տարում բյուջեի բացը, ըստ կանխատեսման, կկազմի 1 մլն ԱՄՆ դոլարից քիչ (համեմատության համար՝ 5-րդ տարում՝ շուրջ 5 մլն ԱՄՆ դոլար):

# 19. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԻՔ ԱԿՆԱՐԿ

	ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԿԱՐԻՔ	ՓԱՍՏԱՅԻ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԻՔ
19.1. ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՓՈՒԼ	\$25 000 000	\$25 000 000
19.2. ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ	\$50 000 000	\$29 500 000
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>\$75 000 000</b>	<b>\$54 500 000</b>

19.3. Նախատեսվում է, որ Տեխնոլոգիական համալսարանի հիմնման կապիտալ ընդհանուր ծախսերը կկազմեն մոտ 25 մլն ԱՄՆ դոլար, իսկ հիմնման փուլում անձեռնմխելի նպատակային դրամագլխի հավաքագրման կարիքը՝ 50 մլն ԱՄՆ դոլար:

19.4. Նպատակային դրամագլխի կառավարման համար կստեղծվի կառավարման ֆոնդ, որը կղեկավարեն պրոֆեսիոնալ փորձառու կառավարիչները՝ վարձատրության հիմունքներով: Կառավարման ֆոնդը կորոշի նպատակային դրամագլխի ակտիվների ներդրումային քարտեզը՝ և միջազգային շուկաներում, և Հայաստանում:

19.5. Նախատեսվում է, որ ներդրումները կլինեն զանազանեցված և քիչ ռիսկային: Ստացված եկամտի՝ գործառնական նպատակներով չօգտագործվող մասը կվերաներդրվի:

ՄԱՆՈՒՄՈՒՆ



# 20. ՀԵՌԱՆՆԿԱՐ

Մեր տեսլականը պետք է լինի Հայաստանը դարձնել կրթության, գիտության և տեխնոլոգիաների ոլորտում առաջատար երկիր:



20.1. Տեխնոլոգիական համալսարանի հավակնոտ ծրագիրն իր ներուժով կարող է **Հայաստանը դարձնել տարածաշրջանային հպոր կենտրոն**՝ գրավիչ ինչպես հայերի, այնպես էլ օտարերկրացիների համար:



20.2. Այն հնարավորություն կընձեռի **Նոր սերնդին լավագույնս իրացնելու իր ներուժը** և աշխարհում դառնալու մրցունակ:



20.3. Այս **ծրագիրն ամբողջապես արտացոլում է մեր ազգի ժառանգությունը և կարողությունները**: Կրթությունը, գիտությունը և ստեղծագործ միտքը միշտ եղել են մեր ազգի առանձնահատուկ հատկանիշները:



20.4. Տեխնոլոգիական համալսարանը կստեղծի հասարակության Նոր երազանքների ձևավորման մի **միջավայր, որը Նոր սերնդի մեջ կսերմանի ձգտում դեպի կրթությունը, գիտությունը և Նորարարությունը**:

# 21. ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

# 21.1.

## 4-րդ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում առաջատար տեխնոլոգիաների որոշ կիրառություններ կարող են ապահովել տարեկան ավելի քան 220 մլն ԱՄՆ դոլարի ապդեցություն:

### ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԱ



ԲԼՈԿ-  
ՇՂԹԱ



ՖԻՆԱՆՍԵՐ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ՈԼՈՐՏ  
**\$50 000 000**



ԻՐԵՐԻ  
ՀԱՄԱՅԱՆՑ




ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ  
**\$35 000 000**



ԱՐՀԵՍՏԱԿԱՆ  
ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՖԻՆԱՆՍԵՐ  
ԱՌԵՎՏՈՒՐ  
**\$60 000 000**



ՌՈԲՈՏԻԿԱ  
ԵՎ ԱԹՍ



ԷՆԵՐԳԵՏԻԿԱ  
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
**\$75 000 000**

ՄԻՋՄԱՍՏՈՒՄ

# 21.2. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

## ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ



### ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՏՎՅԱԼ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- Բուհեր և գիտահետազոտական ինստիտուտներ
- Միջազգային հրապարակումներ և հղումներ
- Ուսանողների թիվ և դինամիկա



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԹ

- Տնտեսության առկա և պոտենցիալ ձյուղեր
- Ոլորտների վրա հնարավոր ավդեցությունը և մասշտաբը
- Համագործակցության մակարդակը ինդուստրիայի ձյուղերի հետ



## ԳԼՈԲԱԼ ԳՈՐԾՈՆՆԵՐ



ԳԼՈԲԱԼ ԱՌԱՋԱՏԱՐ ԲՈՒՀԵՐԻ ՓՈՐՁ

- Միջդիսցիպլինար հետազոտություններ
- Ինդուստրիայի հետ հետազոտական գործընկերություն
- Առցանց ուսուցում
- Միջազգայնացում



ԲԵԿՈՒՄՆԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

- Արհեստական բանականություն / մեքենայական ուսուցում
- Բիոտեխնոլոգիաներ
- Ռոբոտիկա
- Բլոկ-շղթա տեխնոլոգիաներ
- Ամպային տեխնոլոգիաներ և մեծ տվյալներ
- Իրերի համացանց
- Եռաչափ տպագրություն

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

